

Ն. Գ. ՉԵՐՆԻԶԵԿԱԿՈՒ ԺՆՆՊՅԱՆ 150-ամյակը

Ն. Գ. ՉԵՐՆԻՇԵՎՍԿԻՆ ԵՎ XIX Դ. 60—80-ԱԿԱՆ
ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՅ ԱՌԱՋԱՎՈՐ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ

ԳԵՎՈՐԳ ՂԱՐԻՔԱՆՅԱՆ

ՀՍՍՀ ԳԱ ԽՍԿԱԿԱՆ առդամ

Այս օրերին, երբ Սովետական Հայաստանի աշխատավորությունը հանդիսավորությամբ նշում է Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միացման 150-ամյակը, լրանում է նաև ռուս մեծ հեղափոխական-դեմոկրատ, գիտնական, գրող, մտածող, ռուսական սոցիալ-դեմոկրատիայի ականավոր նախորդ նիկոլայ Գավրիլովիչ Չերնիշևսկու (1828.12 (24) հուլիս—1889.17 (29) հոկտեմբեր) ծննդյան 150-րդ տարեդարձը։ Մեծ խորհուրդ կա այս երկու հիշարժան տարեթվերի զուգադիպման մեջ։

Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին պատմական խոշոր իրադարձություն եղավ հայ ժողովրդի կյանքում, փրկեց նրան ֆիզիկական ոչնչացման սպառնալիքից, հսկայական դեր խաղաց բազմադարյան Հայաստանի սոցիալ-տնտեսական, կուլտուրական և քաղաքական հետագա զարգացման գործում։ Ի դեմս ռուս մեծ ժողովրդի, հայ ժողովուրդը ձեռք բերեց հզոր ու հավատարիմ բարեկամի, ներգրավվեց այն պատմական պրոցեսների մեջ, որոնք հասցրին նրան սոցիալական ու ազգային վերածննդի։ Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանի կազմի մեջ մտնելու հետևանքով հայ ժողովրդի գավակները լայնորեն մասնակցեցին ռուսական հեղափոխության, Ռուսաստանում ազատագրական շարժման բոլոր երեք գլխավոր ժամանակաշրջանների հերոսական պայքարին, կրեցին դեկաբրիստների ու Գերցենի, Չերնիշևսկու ու «Նարոդնայա վոլյա»-ի խիզախների, ապա, առանձնապես, պրոլետարական հեղափոխականների բարերար ազդեցությունը։ «Ապագա փոթորկի երիտասարդ շտուրմանները» (Գերցեն) շարքում նրանք պատվավոր տեղ գրավեցին, կանգնեցին Վ. Ի. Լենինի դրոշի տակ։

Կ. Մարքսը, Ֆ. էնգելսը, Վ. Ի. Լենինը բարձր են գնահատել Չերնիշևսկուն։ Վ. Ի. Լենինն ասել է, որ նախքան Կ. Մարքսի, Ֆ. էնգելսի, Գ. Պլեխանովի երկերին ծանոթանալը իր վրա «գլխավոր, գերակշռող ազդեցություն է ունեցել միայն Չերնիշևսկին, և այդ ազդեցությունը սկսվել է «Ի՞նչ անել» վեպից»¹։ Վ. Ի. Լենինը գտնում էր, որ ռուսական ռատոպիական սոցիալիզմի, ինչպես նաև ողջ առաջավոր նախամարքսյան հասարակական գիտության, մտքի զարգացման բարձրագույն էտապը կապված է Չերնիշևսկու անվան հետ։ Վ. Ի. Լենինը Չերնիշևսկուն անվանել է «ռուս մեծ հեղափոխական», «ռուս

¹ «В. И. Ленин о литературе и искусстве», М., 1967, стр. 655.

մեծ գրողը, «վելիկոռուս դեմոկրատ», «համառուսաստանյան դեմոկրատ-հեղափոխական», «նախամարքսյան ժամանակաշրջանի ռուս մեծ սոցիալիստ», «մեծագույն սոցիալիստ-ուտոպիստ», «դեմոկրատիզմի և սոցիալիզմի անբաժանելիության ժամանակաշրջանի դեմոկրատ»: Չերնիշևսկուն և Պլեխանովին Վ. Ի. Լենինը համարում էր ռուս կուլտուրայի ամենախոշոր դեմքերը: Նկատի ունենալով Չերնիշևսկուն և 60-ական թվականների մյուս ռուս հեղափոխականներին, Վ. Ի. Լենինը գրել է. «Իրականում հենց նրանք էին այդ դարաշրջանի մեծ գործիչները, և, որքան մենք ավելի ենք հեռանում նրանցից, այնքան մեզ ավելի է պարզվում մեզ համար նրանց մեծությունը, այնքան ավելի է ակնհայտ դառնում այն ժամանակվա լիբերալ ռեֆորմների շնչինովությունը, ողորմելիությունը»²: Վ. Ի. Լենինը նշել է, որ «Չերնիշևսկու դարաշրջանում», «դեմոկրատիզմն ու սոցիալիզմը միաձուլվում էին մի անխզելի, անբաժանելի ամբողջության մեջ»³:

Չերնիշևսկու աշխատություններում, որոնք սովետական տարիներին հրատարակվել են 16 հատորով, իրենց բարձրագույն զարգացումն են ստացել Ռուսաստանի հեղափոխական դեմոկրատիայի փրկիստփայլությունն ու ողջ առաջավոր հասարակական միտքը: Լինելով բազմակողմանիորեն զարգացած գիտնական, էնցիկլոպեդիկ մտքի տեր մարտիկ, Չերնիշևսկին անջնջելի հետք է թողել փրկիստփայլության և սոցիոլոգիայի, քաղաքատնտեսության և պատմության, էսթետիկայի և գրականագիտության, բարոյագիտության և մանկավարժության, բնագիտության և գիտության փրկիստփայլական պրոբլեմների բնագավառներում:

Հսկայական է Չերնիշևսկու ազդեցությունը նախկին ռուսաստանյան կայսրության մեջ մտնող ժողովուրդների առաջավոր ներկայացուցիչների վրա: Տարաս Շչեքնկոն, Մարկո Վովչոկը, Պանաս Միրնին, Իվան Ֆրանկոն, Կաստուս Կալինովսկին, Զիգմունդ Սերակովսկին, Միքայել Նալբանդյանը, Իլյա Ծավճավաձեն, Նիկո Նիկոլաձեն, Ակակի Մերեթելին, Միրզա Ֆաթալի Ախունդովը, Հասանբեկ Զարդաբին, Կոստա Նետադուրովը, Չոկան Վալիխանովը, Աբայ Կունանբաևը և ուրիշներ եղել են Չերնիշևսկու գաղափարական զինակիցները և հետևորդները, իրենց հեղափոխական-դեմոկրատական, ազգային-ազատագրական հայացքները զարգացրել են նրա անմիջական ազդեցությամբ, տարիներ շարունակ սնվել են նրա մեծ ուսմունքով: Չերնիշևսկու և Նեկրասովի գլխավորած «Սովրեմեննիկ»-ի շուրջն էին համախմբվում երկրի առաջավոր, հեղափոխական ուժերը:

Չերնիշևսկին անձնական կապերի մեջ էր ու մեծ ազդեցություն ունեւր այն ժամանակ Պետերբուրգում սովորող կովկասցի ուսանողների վրա: Այդ ուսանողներից Գ. Թումանովը (Թումանիշվիլին) Վ. Գ. Չերնիշևսկին և կովկասցիները՝ հիշողություններում գրել է. «Անցյալ դարի վաթսուհինական թվականների մտավոր կյանքի աշխուժացումը Ռուսաստանում առանձնապես բարերար ազդեցություն ունեցավ Պետերբուրգում ապրող կովկասցի ուսանողների վրա: Որպես դուրազգաց հարավցիներ, այդ ուսանողները ջերմորեն արձագանքեցին կյանքի այն նոր պահանջներին, որոնք ծագել էին այն ժամանակ ռուսական առաջավոր հասարակության շրջաններում: Կովկասցի

² Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 17, էջ 139:

³ Վ. Ի. Լենին, Նշխ, հ. 1, էջ 337:

ուսանողներն առանձնապես մտերմացան Չերնիշևսկու և նրա ընտանիքի հետ: Թումանովը նշում է «Սովրեմեննիկ»-ի ու Չերնիշևսկու ուժեղ ազդեցությունը նաև Ստեփանոս Նազարյանի ու նրա «Հյուսիսսփայլ»-ի վրա, որի գլխավոր աշխատակիցը Մ. Նալբանդյանն էր՝ «ականավոր հրապարակախոսն ու պոետը»⁴:

Ուշագրավ փաստ է, որ Չերնիշևսկին և Գաբրիել Սունդուկյանը 1846—1850 թվականներին միաժամանակ սովորել են Պետերբուրգի Համալսարանում: Հայ ականավոր բանաստեղծ-լուսավորիչ Սմբատ Շահազիզը Յու. Վեսելովսկուն ուղղած նամակում գրում է. «Ընկերական շրջաններում ես պատկանել եմ այն երիտասարդների թվին, որոնք մեծ ջանասիրությամբ այն ժամանակ (60-ական թվականներին—Գ. Ղ.) հետևում էին ռուսական ժողովուրդին, օրինակ «Սովրեմեննիկ»-ին և նրանց պաշտպանած հայացքներին: 1859 թ. «Սովրեմեննիկ»-ից է վերցրած «Լևոնի վիշտը» պոեմի մի երգի բնաբանը: Ծիշտ է նկատել ակադ. Ա. Կարինյանը, որ «իր «Ամառային նամակներ»-ի մեջ Շահազիզը դրվատում է գոգոլյան ռեալիզմի գեղագիտական սկզբունքները և ապա, առանց Չերնիշևսկու անունը տալու, իրեն հատուկ ձևով ակտիվորեն արձագանքում է մեծ հեղափոխական-գիտնականի հանքահայտ հոգովածների մեջ առաջադրված պատգամներին»⁵:

Միխայել Լեմկեն, ելնելով 60-ական թվականների ազատագրական շարժումների մասին եղած փաստերի ուսումնասիրությունից, գրել է, որ ռուսական հոսանքները շանցան մայրաքաղաքի հայ երիտասարդության կողքով, որի առավել աչքի ընկնող ներկայացուցիչները այն ժամանակ Լազարյան ինստիտուտի սաներն էին: Հայ առաջավոր գործիչների կրթական աղբյուրները Պետերբուրգի, Մոսկվայի բարձրագույն ուսումնական հաստատություններն էին, ռուսական առաջավոր քաղաքական հոսանքները, մամուլը: Այդ կրթության գաղափարական հիմքում ընկած էին ռուս և հայ ժողովուրդների սերտ բարեկամությունը, հայերի ազատագրության ռուսական կողմնորոշումը, նրանց ակտիվ մասնակցությունը ռուս ժողովրդի հեղափոխական շարժմանը: Չերնիշևսկին իր զինակիցների հետ միասին վճռականորեն պաշտպանում էր ժողովուրդների ազատ համագործակցության, փոխադարձ օգնության և օժանդակության գաղափարը:

Հայ իրականության մեջ Նալբանդյանն առաջինն էր, որ ռուս մեծ հեղափոխական դեմոկրատներ Բելինսկու, Գերցենի, Չերնիշևսկու, Դոբրոլյուբովի ազդեցությամբ դարձավ խոշոր փիլիսոփա մատերիալիստ, համառուսաստանյան հեղափոխական դեմոկրատիզմի փայլուն ներկայացուցիչը, 1860-ական թվականների հեղափոխական շարժման պարագլուխներից մեկը:

Նալբանդյանի գաղափարական համերաշխությունը Չերնիշևսկու հայացքներին որոշակի է 1859 թվականից՝ «Հյուսիսսփայլ»-ի էջերում տպագրված գործերից: Այս հարցերը հիմնովին վերլուծել է ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը: «1859 թ. ի վեր,— գրել է նա,— «Հյուսիսսփայլ»-ի էջերում

⁴ «Н. Г. Чернышевский в воспоминаниях современников», т. 1, Саратов, 1958, стр. 404, 406.

⁵ Ա. Բ. Կարինյան, ժողովուրդների եղբայրության գորշի ներքո, Երևան, 1976, էջ 447:

արժարժած իր հրապարակախոսությունները Նալբանդյանն ըստ էության համարաշիվում է Չերնիշևսկու և Դոբրոլյուբովի «Սովրեմեննիկ»-ին»⁶։

Ընդառաջելով Ռուսաստանում ծայր առնող գյուղացիական հեղափոխությանը, Նալբանդյանը բացահայտորեն հակադրվում է լիբերալիզմին, վճռական շրջադարձ է կատարում դեպի հեղափոխական դեմոկրատիզմը և՛ հրապարակախոսությունում, և՛ գործնական քաղաքական աշխատանքով։ Նալբանդյանը մասնակցում է «Զեմլյա ի վոլյա» հեղափոխական կազմակերպության հիմնադրմանը։ Չերնիշևսկու աշխատություններից, ասել է Վ. Ի. Լենինը, «դասակարգային պայքարի ոգու շունչ է փչում»⁷։ Այս կարելի է ասել նաև Նալբանդյանի երկերի մասին։

Չերնիշևսկու նման Նալբանդյանը երազում էր, շրջանցելով կապիտալիզմը, անցնել սոցիալիզմին՝ ժողովրդական-գյուղացիական հեղափոխության միջոցով։ «Չերնիշևսկու, Գերցենի և Օգարյովի գաղափարական զինակից Նալբանդյանը,— գրել է Մարիետա Շահինյանը «Միքայել Նալբանդյան» պատմա-կենսագրական ակնարկում,— Ռուսաստանում անցյալ դարի 60-ական թվականների հզոր ազատագրական շարժման փայլուն ներկայացուցիչներից է»⁸։

Հենվելով Չերնիշևսկու և Բելինսկու աշխատությունների վրա, Նալբանդյանը հետևողական պայքար էր մղում արվեստի իդեալիստական ըմբռնման դեմ և պահանջում էր, որ գրականությունն արտացոլի ժողովրդի կյանքը։ «Հյուսիսափայլ»-ում տպագրված Կոմս էմմանուելի «Հիշատակարան»-ում արդեն շատ ուժեղ է Չերնիշևսկու գաղափարների անմիջական ազդեցությունը։ Գաղափարական ուղղակի ընդհանրություններ կան Չերնիշևսկու և Նալբանդյանի տնտեսագիտական աշխատություններում։

«Հիշատակարան»-ում իր երգիծանքի սուրն ուղղելով ոչ թե մասնավոր անձանց, այլ ժողովրդի նախապաշարումները շարաշահող հեղինակությունների դեմ, Նալբանդյանը համակարծիք էր Չերնիշևսկու այն թեզին, որ «անհնարին է բարիքը, եթե վերավորանք չես հասցնում շարիքին»։ Այս սկզբունքով էր ղեկավարվում «Սովրեմեննիկ»-ին կից հրատարակվող «Սվիստոկ» երգիծաթերթը։ 1861 թ. ապրիլին Փարիզում լույս տեսած «Ծրկու տող» պամֆլետում Նալբանդյանը Չերնիշևսկու նման հարց է դնում հասարակ ժողովրդի իրավունքը պաշտպանել ռոյ միայն բանիվ և գրչով, այլև զենքով և արյունով։ Իր հրապարակախոսության պսակ հանդիսացող «Ծրկագործությունը որպես ուղիղ ճանապարհ» երկում (1862 թ.) Նալբանդյանը պաշտպանում է Ռուսաստանում գյուղացիական հեղափոխության անհրաժեշտության գաղափարը, Չերնիշևսկու օրինակով կացնի է կոչում Ռուսաստանը։

Ինչպես Չերնիշևսկին, Նալբանդյանը ևս ուտոպիստ սոցիալիստ էր և երազում էր սոցիալիզմին անցնել հին, կիսաֆեոդալական, գյուղացիական

⁶ Ա. Ղոա Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, գ. 1, Երևան, 1955, էջ 240։ Չերնիշևսկու՝ Նալբանդյանի վրա ունեցած գաղափարական ազդեցության և նրանց անձնական ծանոթության հարցերի մասին տե՛ս С. К. Даронян, Микаэл Налбандян, Ереван, 1975.

⁷ Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 20, էջ 298։

⁸ «Коммунист», 1954, № 17, стр. 60.

համայնքի միջոցով: Անցյալ դարի 60-ական թվականներին նրանք չէին կարող տեսնել, որ միայն կապիտալիզմի և պրոլետարիատի զարգացումն է ընդունակ ստեղծելու նյութական պայմաններ և հասարակական ուժ՝ սոցիալիզմն իրականացնելու համար: Սակայն, ինչպես Վ. Ի. Լենինն է սովորեցնում, պատմական ծառայությունների մասին դատում են ոչ թե նրանով, թե ի՞նչ չեն ավել պատմական գործիչները ժամանակակից պահանջների համեմատությամբ, այլ նրանով, թե նրանք ի՞նչ նոր բան են ավել իրենց նախորդների համեմատությամբ⁹:

Չերնիշևսկու և մյուս հեղափոխական դեմոկրատների հետևորդ լինելով հանդերձ՝ Նալբանդյանը ինքնատիպ մտածող ու գործիչ էր, Նա ստեղծեց քաղաքական ու փրիստոփայական մտքի խոր ու վառ երկեր, գեղարվեստական գրականության ինքնուրույն ստեղծագործություններ՝ սերտորեն կապված իր բազմաշարժար, մարտնչող ու լուսավորվող ժողովրդի ազգային-ազատագրական շարժման հետ, երկեր, որոնցով դաստիարակվեցին հայ առաջավոր երիտասարդության ամբողջ սերունդներ ոչ միայն Արևելյան Հայաստանում և Ռուսաստանի ու Կովկասի հայաբնակ շրջաններում, այլ նաև Արևմտյան Հայաստանում ու արտասահմանի հայ գաղթօջախներում: Նալբանդյանի միջոցով Չերնիշևսկու և մյուսների հեղափոխական դեմոկրատական հայացքները թափանցում էին Պոլիս ու Փարիզ, զինում նրա զինակիցներին ու համախոհներին՝ Հարություն Սըվաճյանին, Սերոբե Թազվորյանին և ուրիշներին:

Լինելով Չերնիշևսկու հավատարիմ զինակիցը, Նալբանդյանը 1859 թ. մինչև իր մահը՝ 1866 թ., հավատարիմ մնաց հեղափոխական դեմոկրատիզմին, ռուսական հեղափոխությանը, որի միջազգային նշանակությունը նա բարձր էր գնահատում: «Ռուսիո ազատությունը, — գրում էր Նալբանդյանը, — ընդհանուր մարդկության ազատության վերաբերությամբ մեծ խորհուրդ ունի»: Հեղափոխությամբ ազատագրված ռուս ժողովրդի հետ էր նա կապում հայ ժողովրդի ազգային ու սոցիալական ազատագրությունը: Այդ նպատակով էլ նա շրջագայում է Կովկասում, լինում է Հայաստանում, կապվում տեղի հեղափոխական ուժերի հետ, անցնում է արտասահման, լոնդոնում հանդիպում Գերցենի, Օգարյովի, Բակունինի հետ, պլանավորում Կովկասի տեղը՝ նախապատրաստվող համառուսաստանյան ապստամբության մեջ: Այս մասին արդեն հայտնի նյութերին ավելացել են նաև վերջերս Աբխազիայի Մեբելդա գյուղում հայտնաբերված Վորոնովների արխիվի նյութերը¹⁰: Անցյալ դարի 60—70-ական թվականների Ռուսաստանի և Անդրկովկասի նշանավոր հասարակական և կուլտուրական գործիչ, Գերցենի, Օգարյովի և Բակունինի զինակից Ն. Ն. Վորոնովը, որը Չերնիշևսկու և Նալբանդյանի հետ միասին միևնույն գործով բանտարկվել էր Ալեքսեևյան ռավելինում, հարյուր տարի առաջ բնակություն էր հաստատել Մեբելդայում, ոմենցել Յ զավակ, որոնք բոլորն էլ ծառայություն են մատուցել հեղափոխությանը: Նրա աղջիկը՝ Լյուդմիլան, 1903 թ. մտնում է բոլշևիկյան կուսակցության շարքերը: Վո-

⁹ Վ. Ի. Լենին, ԵԺ, հ. 2, էջ 220,

¹⁰ И. П. Лефтеров, Цебельдинская находка (из истории революционных связей между Петербургом и Кавказом), М., 1976.

րոնոմների շորս սերունդ պահել են իրենց ընտանեկան արխիվը, որը հարուստ նյութեր է պարունակում Ռուսաստանի հեղափոխական դեմոկրատների, բոլշևիկների, Վ. Ի. Լենինի և նրա զինակիցների մասին, այդ թվում նաև ռուս և հայ հեղափոխականների փոխադարձ կապերի մասին: 1861 թ. հեղափոխական դեմոկրատական շարժման Պետերբուրգի կենտրոնը՝ «Սոլովեմեննիկ»-ը, Զերնիշևսկու ղեկավարությամբ, և Լոնդոնի կենտրոնը՝ Գերցենի ու Օգարյովի ղեկավարությամբ, լավ ճանաչելով Վորոնոմին վստահում են նրան անլիզալ կապավորի պարտականությունը: 1862 թ. փետրվարի վերջին նա գնում է արտասահման, ապրիլին Լոնդոնում հանդիպում և զրույցներ ունենում Բակունինի, Գերցենի և Օգարյովի հետ, նրանց հետ քննարկում «Կոլոկոլ»-ը Անդրկովկաս առաքելու ուղիների ու միջոցների հարցը: Այս պլանների իրականացման գործում Նալբանդյանին մեծ տեղ է հատկացվում: «Ակներև է միանգամայն, — դիպուկ նկատում է Աշոտ Հովհաննիսյանը, — որ Նալբանդյանը խոշոր մի գործիչ էր, որի հետ «Լոնդոնի պրոպագանդիստները» կապում էին աբեկլյան և, մասնավորապես, հայկալան շարժման հեռանկարները: Այդ մասին են վկայում Նալբանդյանի համար կազմած այն ծածկագրերը, որոնց քառամթերքը մատնում է Լոնդոնի ռուս ռևոլյուցիոներների մտադրությունը՝ Ռուսաստան վերադարձող Նալբանդյանի հետ հատկապես Կովկասի և Թուրքիայի ընդհատակյա աշխատանքների մասին թղթակցություններ ունենալու համար»¹¹: Այդ ծածկագրերում Նալբանդյանն անվանվում էր «Պյոտր Ալեքսանդրովիչ Յուրիկով», իսկ «Ջեմլյա ի վոլյա»-ի անդրկովկասյան ֆիլիալը՝ «առևտրական բարեկամներ Թիֆլիսում», Թուրքիան՝ Ավստրիա, Թիֆլիսը՝ Բեռլին, Կովկասյան երկրամասը՝ Պրուսիա, Վրաստանը և Կովկասը՝ Տուլա, Հայաստանը՝ Մոսկվա և այլն¹²: Լոնդոնի, Պետերբուրգի և Անդրկովկասի միջև կապերի իրականացումը դրվում էր Նալբանդյանի ու Վորոնոմի վրա:

1862 թ. հունիսի սկզբին Վորոնոմը Գերցենից և Բակունինից նամակներ ու ալ նյութեր է բերում Նալբանդյանին, որն այն ժամանակ Պետերբուրգում դասախոսական աշխատանք էր կատարում համալսարանի արևելյան ֆակուլտետում: Հանդիպելով Նալբանդյանին, Վորոնոմն անցնում է Մոսկվա, իսկ Նալբանդյանը՝ Նոր Նախիչևան: Նալբանդյանին ուղղված նամակում Բակունինը իր և Գերցենի անոսնից խնդրում էր աջակցություն ցույց տալ Թիֆլիս մեկնող Վորոնոմին՝ «Կոլոկոլ»-ի կովկասյան տրանսպորտ կազմակերպելու գործում՝ ներկայացնելով նրան Կոստանդնուպոլսում, Թիֆլիսում և այլ վայրերում գտնվող իր բարեկամներին: Նշենք, որ այդ ժամանակ դեռ չէին կազմավորվել Բակունինի անարխիստական հայացքները և նա իր հեղափոխական բուռն գործունեությամբ ամբողջովին կլանված էր սլավոնական ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի կազմակերպման հարցերով: Ակտիվորեն մարտնչելով Պրագայի, Դրեզդենի բարիկադների վրա, նա իր հայրենիքի ազատագրման ուղիներ էր որոնում: Բակունինի ծրագրով Ռուսաստանի, Ավստրիայի և Թուրքիայի կայսրությունները հեղափոխական ճա-

¹¹ Աշոտ Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, գ. 1, էջ 471—472:

¹² М. И. Х. Лемке, Очерки освободительного движения «шестидесятых годов», СПб., 1908, стр. 79—81.

նապարհով ոչնչացնելուց հետո պետք է ստեղծվեր բոլոր սլավոնների ֆեդերացիա, իսկ ապա նաև ընդհանրապես ազատ ժողովուրդների ավտոնոմիա և ֆեդերացիա: Այս պլաններում կարևոր տեղ էր հատկացվում նաև Կովկասին և այնտեղ դործող հեղափոխական ուժերին, որոնց մեջ ղեկավար դեր էր կատարում Նալբանդյանը: Յարական Նրրոդը բաժանմունքի գործակալի մատնությամբ «Լոնդոնի պրոպագանդիստներ»-ի նամակները, որոնց մեջ հիշատակվում էին նաև Նալբանդյանի և Չերնիշևսկու անունները, բռնվում են, և սկսվում են ձերբակալությունները: Նույն հրամանով 1862 թ. հուլիսի 7-ին ցարական իշխանությունները ձերբակալում են Չերնիշևսկուն և Ն. Սերնո-Սոլովևիչին, հուլիսի 14-ին՝ Նալբանդյանին Նոր Նախիջևանում, սեպտեմբերի 24-ին՝ Վորոնովին Թիֆլիսում: Նրանք բոլորն էլ բանտարկվում են Ալեքսեյան ռավեյինում, որպես «պետական հանցագործներ»:

Այստեղ մենք ուզում ենք մի քանի խոսք ասել Չերնիշևսկու և Նալբանդյանի փոխադարձ ծանոթության և առնչությունների մասին, մի կարևոր հարց, որը քիչ չի զբաղեցրել Նալբանդյանագետներին: Այն արտացոլվել է նաև գեղարվեստական գրականության մեջ: Չերնիշևսկու և Նալբանդյանի անձնական հանդիպումների և ծանոթության մասին դրական կարծիքները հմուտ նալբանդյանագետ Աշոտ Հովհաննիսյանը համարեց «խախուտ հիմքերի վրա կառուցված», «լեզենդ», «պատմական աղբյուրների զանցառման կամ դրանց բռնագրոսիկ օգտագործման» հետևանք¹³: Ակադեմիկոսն իրավացի էր՝ պահանջելով պատմական ստույգ փաստաթղթեր: Բայց մենք կարծում ենք, որ պիտի նկատի առնվի այն, որ Չերնիշևսկին, ինչպես նաև Նալբանդյանը, փորձված կոնսպիրատորներ էին: Չերնիշևսկին Ֆուլյնիսկ վարժվել էր գրել մի քանի ձեռագրով: Բնորոշ է, որ շնայած ցարական իշխանությունների գործադրած բոլոր միջոցներին, Չերնիշևսկուն մեղադրելու կոնկրետ «հանցանշան» չգտնվեց: Նրանք ձերբակալվեցին ոչ թե իրենց անգգուշության, այլ ուրիշների մեղքով: 1863 թ. սեպտեմբերի 1-ին Բակունինին գրած նամակում Գերցենը հանդիմանում է նրան այն բանի համար, որ նա իր շաղակրատությամբ միայն Նալբանդովին չէ, որ կործանեց, այլև, օրինակ, Վորոնովին, որ նրա նամակում Վորոնովի մասին արված ավելորդ նշումները Նալբանդյանին «Կովկասից բերդ գցեց, իսկ ապա աքսոր»¹⁴:

Գերցենը և մյուսները մեծ վստահությամբ էին խոսում Նալբանդյանի մասին. «Նալբանդյանը ոսկի հոգի ունի,— գրում էր Օդարյովը Ա. Սերնո-Սոլովևիչին,— նվիրված է անշահախնդիր, նվիրված է միամտորեն, սրբության հասնելու շփոթ»: Այս նամակին կցած երկտողում Գերցենն ավելացրել էր, որ Նալբանդյանը՝ իրենց արևելյան բարեկամը, «գերազնվագույն մարդ է... մենք սիրում ու հիշում ենք իրեն»: Նալբանդյանի մասին Տուրգենևը Գերցենին գրել է. «Իսկապես սքանչելի երիտասարդ է և ես նրան անկեղծորեն սիրեցի»: Եղբոր կնոջը գրած նամակում Բակունինը հանձնարարում էր Նալբանդյանին, որպես «ոսկի մարդ, ամբողջովին հոգի և անձնվիրություն... դու կսիրես նրան որպես անձնավորություն...»:

¹³ Աշոտ Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, գ. 1, էջ 450:

¹⁴ А. Герцен, Собрание сочинений, в 30-ти томах, т. XXVII, кн. I, М., 1963, стр.

«Լոնդոնի պրոպագանդիստներ»-ի հետ հարաբերություններ ունենալու մեջ մեղադրված անձանց մասին 8 հատոր կազմող արխիվային նյութերից երևում է, որ Զերնիշևսկու և Նալբանդյանի վարքագիծը շատ էր համընկնում բանտում և հետաքննության ժամանակ, դատական պրոցեսում. նրանք արհամարհանքով և հեզանքով էին արտահայտվում նույն քննիչ հանձնաժողովի անդամների մասին: Պատասխանատվություն չստանձնելով Վեռնիշևսկու պրոպագանդիստներ»-ի խոսքերի ու գործերի համար, նրանք չէին ասում ոչինչ, որ կարող էր օգտագործվել մյուս «մեղադրվածների» ընդհանուր գործերի դեմ: Նրանք իրենց հեղափոխական պարտքն էին համարում հրաժարվել ավելորդ խոստովանությունից, խոսափել ուժերի անմիտ վատնումից, հանուն հեղափոխության հեռանկարների: Բարձր գնահատելով Զերնիշևսկու հեղափոխական բնագիծը, Վ. Ի. Լենինն ասել է. «Կան երաժիշտներ, որոնց մասին ասում են թե նրանք բացարձակ լսողություն ունեն, կան այլ մարդիկ, որոնց մասին կարելի է ասել, որ նրանք բացարձակ հեղափոխական բնագիծ ունեն: Այդպիսին էր Մարքսը, այդպիսին էր նաև Զերնիշևսկին... Զերնիշևսկու մեծագույն ծառայությունն այն է, որ նա ոչ միայն ցույց տվեց, որ ամեն մի ճիշտ մտածող և իսկապես կարգին մարդ պետք է հեղափոխական լինի, այլ նաև այն, որն ավելի կարևոր է՝ ինչպիսին պետք է լինի հեղափոխականը, ինչպիսին պետք է լինեն նրա կանոնները, ինչպես պետք է նա գնա դեպի իր նպատակը, ինչպիսի եղանակներով ու միջոցներով պետք է հասնի նրա իրականացմանը»¹⁶:

Բանտի ու աքսորի դաժան պայմաններում Զերնիշևսկու վարքագիծը հասկանալու համար բնորոշ է նրա նամակը՝ գրված մենախցից իր կնոջը. «Մեր կյանքը պատկանում է պատմությանը, կանցնեն հարյուրավոր տարիներ, իսկ մեր անունները դեռ սիրելի կլինեն մարդկանց... հետևապես անհրաժեշտ է, որ մենք չզցենք մեր բնավորության առույգությունը այն մարդկանց առջև, որոնք պետք է ուսումնասիրեն մեր կյանքը»¹⁶: Նույն առույգ ոգով են գրված Նալբանդյանի բազմաթիվ նամակները իր մենախցից (Զերնիշևսկին գտնվում էր Ալեքսեյան ռավելինի № 11 մենախցում, իսկ Նալբանդյանը՝ սկզբում 8-ում, ապա 14-ում և 17-ում), որոնցով նա շարունակում էր պայքարել իր գաղափարական հակառակորդների դեմ: 1862 թ. դեկտեմբերի 30-ին եղբորը՝ Ղազարոսին, ուղարկած նամակում Նալբանդյանը գրում էր. «Գրիր նույնպես որ շտիբեն իմ մասին ու լաց չլինեն: Ես շատ եմ նեղվում, որ չորս կողմից անընդհատ ռմբակոծում են ինձ արցունքներով. վերջ տվեք, ի սեր Քրիստոսի, այդ բոլորին...»¹⁷:

Ուշագրավ զուգահեռություններ կան բանտախցում Զերնիշևսկու և Նալբանդյանի գրական զբաղմունքների մեջ: Զերնիշևսկու 9 օր տևող հացադուլի հետևանքով ցարական իշխանությունները նրան, ինչպես նաև Նալբանդյանին և մյուսներին հարազատների հետ տեսակցության, գրքից ու թղթից օգտվելու իրավունք են տալիս: Զերնիշևսկին բանտում գտնվելու 678 օրերի ընթացքում, մոտ 205 մամուլ ծավալով թարգմանություններ և ինքնուրույն գործեր է գրում, այդ թվում նաև հուլակավոր «Խնչ անել» վեպը: Նալբանդյանը

¹⁶ «В. И. Ленин о литературе и искусстве», стр. 655.

¹⁶ М. Н. Гернет, История царской тюрьмы, т. 2, М., 1961, стр. 313.

¹⁷ Մի բայել Նալբանդյան, Ելժ, հ. 4, Երևան, 1949, էջ 130:

նը գրում է՝ «Կրիտիկա Սոս և Վարդիթերի», «Հեգելը և նրա ժամանակը», «Մեր լեզվի արմատական բարեփոխության փորձ» և այլ գործեր: Չերնիշևսկին բանտում ավարտում է Շլոսերի «Ընդհանուր պատմության» 15 և 16 հատորների, Մաքուլեյի «Անգլիայի պատմության» 7 և 8 հատորների թարգմանությունները, իսկ Նալբանդյանը իր նամակներում խնդրում է ուղարկել Շլոսերի և Մաքուլեյի երկերի ժողովածուները, ստանում և դիտողություններ է անում նրանց հիման վրա: Նալբանդյանի ձեռքի տակ է եղել Մաքուլեյի «Ծրկերի լիակատար ժողովածուի» առաջին հատորի 1860 թ. այն հրատարակությունը, որի խմբագիրներից մեկը եղել է Չերնիշևսկին:

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ այն ժամանակ ուսու հեղափոխական-դեմոկրատները շունչին մշակված վարքագիծ, թե ինչպես պահեն իրենց բանտում և հետաքննության ժամանակ: Ռուսաստանի ռազմաքաղաքական հեղափոխականները 60—80-ական թվականներին մշակեցին ցարական դատարանի առաջ իրենց վարքի կանոնները, որոնց գլխավոր պահանջներն էին՝ չբացահայտել ընկերներին և ամեն մի հետաքննություն, առավել ևս դուրաց դատավարությունը: Վերածել հեղափոխական հայացքների պրոպագանդայի միջոցի: Հետագայում պրոլետարական հեղափոխականները՝ բոլշևիկները, Վ. Ի. Լենինի ղեկավարությամբ, մշակեցին ցարական դատարանի առաջ իրենց վարքագծի նորմաները, որոնք փայլուն կերպով իրականացրեց Բոգդան Կոնյանցը 1905 թ. մարտին իր դատավարության ժամանակ և արժանացավ Վ. Ի. Լենինի բարձր գնահատականին: Չերնիշևսկին և Նալբանդյանը 1862—1864 թթ. դատաքննություններում ցուցաբերեցին հեղափոխական դեմոկրատների բարոյական վարքագծի հար և նման օրինակ՝ ժխտեցին թուր այն «մեղադրանքները», որոնք կարող էին վնասել իրենց ընկերներին և գործին, չհրաժարվելով իրենց քաղաքական հայացքներից: Հետաքննության ժամանակ Նալբանդյանը բացատրում է, որ Բակոնինի հաճարարական խնդիրը թե ընդունել է նրա կնոջը արտասահման՝ ամուսնու մոտ մեկնելու համար դրամական օգնություն ցույց տալու խնդրանք պարունակող նամակները հարազատներին հանձնելու նպատակով: Չերնիշևսկին գտնում էր, որ հեղափոխականն ամեն բան պետք է անի, իրեն փրկելու համար՝ պահելով իր պատիվն ու արժանապատիվությունը: «Մենք այնքան էլ շատ չենք, որ ինքներս թոկի մեջ մտնենք», — ասում էր Չերնիշևսկին¹⁸: Հավանաբար կոնսպիրատիվ նպատակներով էլ Չերնիշևսկին և Նալբանդյանը իրենց հանդիպումների մասին գրավոր հետքեր չեն թողել, իսկ իշխանություններն էլ չեն կարողացել արձանագրել այդ մասին: Մենք հավանական չենք համարում, որ Չերնիշևսկին և Նալբանդյանը, լինելով ժամանակակիցներ, գաղափարական սերտ համախոհներ, հեղափոխական միևնույն գործի համար պայքարողներ, ապրելով միևնույն ժամանակ նույն քաղաքում, միաժամանակ բանտարկված լինելով հարևան մենախցերում, անձամբ ծանոթ չլինեին: Անհրաժեշտ է նկատի ունենալ նաև, որ ըստ հավաստի տվյալների շատ կովկասցիներ եղել են Չերնիշևսկու տանը՝ Պետերբուրգում:

Սակայն Չերնիշևսկու հզոր ազդեցությունը պետք է բացահայտել ոչ այնքան նրա անվան կամ աշխատությունների հիշատակման մեջ. դրանք մինչև հեղափոխությունն արգելված են եղել: Անհրաժեշտ է ավելի խորը հե-

¹⁸ «Н. Г. Чернышевский в воспоминаниях современников», т. I, стр. 392.

տազոտել նրա և հայ գործիչների գաղափարական կապերն ու ազդեցությունները: Հայ առաջին մարքսիստներից Իսահակ Լալայանցը գրել է, որ 80-ական թվականների «մամուլում չէր կարելի արտասանել «ռուս մարքսիստներ», կամ «Մարքսի ռուս հետևորդներ» բառերը, այլ հարկ էր լինում ասել «ռուս աշակերտները, որոնք» և այլն: Կամ, օրինակ, արգելված էր մամուլում հիշատակել Ն. Գ. Չերնիշևսկու ազգանունը, այլ ասվում էր՝ «Ռուս գրականության գոգոլյան ժամանակաշրջանի ուրվագծեր»-ի հեղինակը և նման այլ բաներ¹⁹: Միանգամայն ճիշտ է նկատել գրականագետ Սահակ Բազյանը «Հարություն Սըվաճյանի «Հրապարակախոսություն» ժողովածուի իր առաջաբանում, որ նա նախանշյալի գաղափարների պաշտպանության կոնսպիրատիվ ձև ուներ, «որը գալիս էր նախանշյալից և հիշեցնում նրա գործադրած հնարանքը Չերնիշևսկուց կատարած մեջբերումների նկատմամբ»²⁰: Հիշենք Բաֆֆու պատասխանը իր ռեակցիոն քննադատ Հայկունու հարձակումներին: Ցարական իշխանություններից իրեն և իր «եռենթը» վեպը պաշտպանելու համար, նա ամեն կերպ աշխատում էր ժխտել իր վրա Չերնիշևսկու ազդեցության փաստը: «...Պ. Հայկունին «Կայծեր»-ի հեղինակին վնասելու համար մի այլ մատուցություն էլ է անում,— գրում է Բաֆֆին:— Նա ասում է, որ «Կայծեր»-ի հեղինակը շատ է կարդացել Չերնիշևսկու ռոմանը (խոսքը «Խնչ անել»-ի մասին է—Գ. Ղ.) և իր վեպերը գրում է նրա ազդեցության ներքո... ինչպես... մի ժամանակ «եռենթ»-ում, ուր Չերնիշևսկու վերա Պավլովնայի երազը իրա վարդանի բերանն էր դնում... Պ. Հայկունուն պետք է լավ հայտնի լինի, որ Չերնիշևսկու հիշյալ գիրքը Ռուսաստանում արգելված է, և հեղինակն անհայտության մեջ է ապրում... Խնչ նպատակ ունի պարոնը, որ մեր անմեղ գրականության վրա տարածում է այս տեսակ կասկածներ»²¹: Այս իհարկե Բաֆֆու կողմից արվում էր նախազգուշական նպատակներով, նկատի ունենալով, որ Չերնիշևսկու ուղղակի ազդեցության բացահայտումը իր դեմ հալածանքների տեղիք կտա:

Չերնիշևսկու հմայքն ու գաղափարները դեռևս նրա կենդանության ժամանակ, իսկ առավել ևս մահվանից հետո ավելի ու ավելի են տարածվում հայ իրականության մեջ: Հայ առաջին սոցիալ-դեմոկրատներից մեկը՝ Գևորգ Ղաբաշյանը (Արկումեդ) հիշում է, որ 1870-ական թթ. վերջերին և 80-ական թվականների սկզբներին ուսանողության և Թիֆլիսի բարձր դասարանների աշակերտության մի մասի համար Չերնիշևսկին, Դոբրոլյուբովը, Պիսարևը, Տուրգենևը և ուրիշներ սիրելի հեղինակներ էին²²: 1878 թ. հունվարին նեկրասովի մահվան առթիվ տպագրած հոդվածում «Մշակ»-ը նշում էր Չերնիշևսկու խոշոր դերը «Սովրեմեննիկ»-ում՝ 1856—1862 թթ.: Չերնիշևսկու անունը հոդվածում չի նշվում, ակնարկվում է «Արվեստի հարաբերությունը դեպի իրականությունը» աշխատությունը, որի հրատարակությունից հետո «Սովրեմեննիկ»-ը «նորից սկսում է պայծառ քայլերով առաջ երթալ մինչև 1862 թ.»²³: 1860-ական թվականներին Մոսկվայի համալսարանի իրավաբանական ֆակուլտետի ուսանող, հետագայում ականավոր թարգմանիչ ու մանկավարժ Փիլի-

¹⁹ «Հին բուլկիների հիշողություններ», գ. 2, Երևան, 1961, էջ 21—22:

²⁰ Հ. Սըվաճյան, Հրապարակախոսություն, Երևան, 1960, էջ 29:

²¹ Բաֆֆի, Գրականության մասին, Երևան, 1958, էջ 284—285:

²² Գևորգ Ղաբաշյան, Անցյալի հիշողություններից, Թիֆլիս, 1918, էջ 9:

²³ «Մշակ», 1878, № 2:

պոս վարդանյանը, որը մոտ հարաբերությունների մեջ էր Չերնիշևսկու մտերիմ ընկեր, նախկինում որպես պետրաշևցիների խմբակի անդամ Սիբիր աքսորված պոետ Ա. Ն. Պլեշչեևի հետ, գրել է. «...մեր ժամանակվա ուսանողությունը ոչ թե միայն կարդում էր Բելինսկուն, Գերցենին, Չերնիշևսկուն, Դոբրոլուբովին, Տուրգենևին, Նեկրասովին, այլև սիրում ու պաշտում էր նրանց: Թե ինչեր էր պատմում Պլեշչեևը դրանց մասին, չեմ կարող կրկնել. միայն այսքանը կասեմ, թե որքան հս էի ազա՜ բան լսելու նրանցից, այնքան էլ նա էր հետաքրքիր իմանալու ինձնից մեր ազգի անցյալ ու նոր վիճակը: Չերնիշևսկու դատի առթիվ մի երկու անգամ Պետերբուրգ կանչված լինելով, ուր այն միջոցին կալանավորված էր մեր վաղամեռիկ Ն.-ը (Մ. Նալբանդյանը— Գ. Ղ.), Պլեշչեևը առիթ էր ունեցել նրա մասին մի քանի բան լսելու և մեծ գովասանք էր ընծայում նրան: Այս առթիվ հս էլ պատմում էի նրա ձերբակալության հանգամանքները, որոնք աչքիս առաջ էին կատարվել Նոր Նախիջևանում»:

1886 թ. Մարտիկում լույս տեսնող «Արմենիա» թերթի Կովկասի թղթակիցը կովկասահայ երիտասարդության՝ պոլսահայ երիտասարդությունից ավելի առաջադեմ լինելը բացատրում էր նրանով, որ առաջինները գտնվել են 60-ական թվականների ռուս հեղափոխականների և նրանց առաջնակարգ գրողների ազդեցության տակ: Ով որ կարդա Չերնիշևսկու, Դոբրոլուբովի, Բելինսկու և այլ այս տեսակի մշակների շարադրությունները, դրում էր նա, դժվար էլ է, որ մարդ հեղափոխական կուսակից չդառնա:

Չերնիշևսկու երկերի և հատկապես նրա «Ի՞նչ անել» վեպի ազդեցությունը զգալի է Բաֆֆու, Ռաֆայել Պատկանյանի, Ալեքսանդր Շիրվանզադեի, Վրթանես Փափազյանի, Ա. Ադելյանի և այլ նշանավոր հայ գրողների աշխարհայացքի ու գործունեության վրա: Վրթանես Փափազյանը «Պատմություն հայոց գրականության» գրքում նշել է, որ Բաֆֆու վրա ազդել են «60-ական թվականների ռուս գրողները—Չերնիշևսկին, Տուրգենևը և այլն»²⁴: Բաֆֆու ստեղծագործության և աշխարհայացքի վրա Չերնիշևսկու ազդեցության մասին դեռևս նախահեղափոխական տարիներին նշել են Յուրի Վեսելովսկին և ուրիշներ²⁵: 1860 թ. գրած «Հուլիսյան միապետություն» հոդվածում Չերնիշևսկին ընդգծում էր քաղաքական իշխանության, նյութական բարեկեցության և կրթության սերտ կապը: «Ով աղքատության մեջ է գտնվում,—գրում էր նա,—չի կարող զարգացնել իր մտավոր ուժերը. ում մտավոր ուժերը չեն զարգացած, նա ընդունակ չէ իրեն համար օգտակար ձևով իշխանությունից օգտվելու, ով չի կարող օգտվել քաղաքական իշխանությունից, նա չի կարող ազատվել ճնշումից, այսինքն՝ աղքատությունից, հետևապես և՛ տգիտությունից»: Նալբանդյանը «Երկրագործության» մեջ գրում է. «Ստրկության մեջ, աղքատության մեջ չկա և չէ կարող լինել լուսավորություն»²⁶: «Կայծեր»-ում Բաֆֆու հերոսներից Ասլանն ասում է. «Ասիր, Ֆահրադ, առանց հիմնավոր գիտության մարդ չի կարող օգուտ բերել ոչ իր ազգին, ոչ իր հայրենիքին և ոչ մարդկությանը... գիտությունը գլխավոր ուժն է... որ տնօրինում է

24 Վ. Փափազյան, Պատմություն հայոց գրականության, Պոլիս, 1934, էջ 230:

25 Ю. А. Веселовский, Очерки армянской литературы, истории и культуры, Ереван, 1972, стр. 190.

26 Մի քայլի Նալբանդյան, ԵԼԺ, հ. 2, էջ 225:

մարդկային բարին, նրա երջանկությունը, նրա խաղաղությունը²⁷։ Նալ-բանդյանից հետո գերազանցապես նրա և Չերնիշևսկու ազդեցության տակ Րաֆֆին դարձավ հայ իրականության մեջ կղերա-պահպանողական գաղա-փարախոսության դեմ մղվող պայքարի առաջամարտիկը, հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման գաղափարախոսն ու լավագույն իղձերի մարմնավորողը։ Ղազարոս Աղայանը իր հուշերում նշել է, որ Րաֆֆին իրեն ասել է. «Ես Նալբանդյանցի ուղղությանն եմ համակրում։ Իմ կարծիքով միակ ուղիղ ճանապարհը նրա քարոզածն է»²⁸։ Իր «Սալբի» վեպը (1867) Րաֆֆին մեծարանքով նվիրել է «անմահ Մ. Նալբանդյանցի միշտ օրհնյալ հիշատակին»։

Խիստ քննադատելով այն վայ մարքսիստներին, որոնք Րաֆֆուն և այլ դասականների «նացիոնալիստներ» հայտարարելով, արգելում էին նրանց գրական հարուստ ժառանգության հրատարակությունը, սովետական ակա-նավոր գրող Ա. Ֆադեևը «Պրավդա»-ում տպագրված «Աշխատավորների կո-մունիստական դաստիարակությունը և սովետական արվեստը» հոդվածում գրել է. «Հիմնվելով այն բանի վրա, որ անցյալում ճնշված ժողովուրդ-ների դասականների երկերում կարելի է նկատել շատ թե քիչ նացիոնալիզմ, այս մարդիկ ջնջում էին այն առաջադեմ նշանակությունը, որ իր ժամանա-կին ունեցել են դասականները, հայտարարում էին նրանց «նացիոնալիստներ», արգելում էին տպագրել ու հրատարակել նրանց»²⁹։

* * *

Սիրիի աքսորավայրից վերադառնալուց հետո 1883—1889 թթ. Չեր-նիշևսկին բնակություն է հաստատում Աստրախանում։ Այս շրջանում սերտ կապեր են հաստատվում նրա և Աստրախանի շատ հայ ընտանիքների միջև։ 1883 թ. նոյեմբերի 9-ի համարում «Մշակ»-ը գրել է. «Ռուս հայտնի գրող Չերնիշևսկին՝ «ЧТО ДЕЛАТЬ?» ռոմանի հեղինակը, վերադարձած է Սիրի-ից, որտեղ նա ապրում էր 20 տարի շարունակ այնտեղ աքսորված լի-նելով և այժմ ապրում է Աստրախան քաղաքում»։ Երեք օր հյուրանոցում մնալուց հետո Չերնիշևսկին բնակարան է վարձում գերազանցապես հայե-րով բնակեցված թաղամասում՝ Պոչտովայա փողոցի վրա՝ հայ առևտրական Խաչիկովի տանը։ Այս մասին Չերնիշևսկին հայտնում է իր որդուն. «Քո մայ-րը վարձել է մեր տանտիրոջ (Խաչիկովի) այն տունը, որի պատուհանները նա-յում են փողոցի վրա, այդ տան կողքին գտնվում էր այն բնակարանը, ուր մենք ապրում էինք ձեր այստեղ եղած ժամանակ»։ Շուտով Չերնիշևսկին մոտ հարաբերություններ է հաստատում Մելքումովների, Խաչատուրովների, Ավե-տովների և այլ հայ ընտանիքների հետ։ Այս մասին այն ժամանակ Չերնի-շևսկու քարտուղար Կ. Մ. Ֆեոդորովը գրել է. «Հուրախություն Չերնիշևսկի-ների, այն նույն տանը, որտեղ նրանք տեղավորվել էին, ապրում էր Աստրա-խանի հայերի՝ ասիական կոշիկների մանր առևտրական Մելքումովների և տաճն տիրոջ գործակատար Մարտիրոս Խաչատուրովի (կնոջ հետ) ընտանիքը։ Ահա այդ հասարակ մահկանացուները, ոչ հարուստ, կիսագրագետ մարդիկ

27 Րաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 5, Երևան, 1956, էջ 456։

28 Ղ. Աղայան, Երկեր, հ. 3, Երևան, 1940, էջ 111։

29 «Правда», 16.IV.1939.

Զերնիշևսկիներին ցույց տվին առաջին նյութական և բարոյական օգնությունը»³⁰։

Հետևելով իր սկզբունքին՝ «գրել նշանակում է ապրել», Զերնիշևսկին Աստրախանում ևս շատ է կարգում ու գրում, նա օգտվում է Աստրախանի հանրային, գիմնազիայի գրադարաններից, ինչպես նաև հայ ծանոթների մոտ եղած գրքերից։ Սովորում էր նաև հայերեն։ Զերնիշևսկին զբաղվում էր գրական գործունեությամբ, բայց հրատարակվելու համար պարտավոր էր պահպանել նրան թույլ տրված երկու պայմանը՝ նախնական գրաքննություն և ծածկանուն։ Հայտնի է, որ Զերնիշևսկին Աստրախանում գերմաներենից թարգմանում է Գևորգ Վեբերի «Ընդհանուր պատմություն»-ը։ Սարատովում Զերնիշևսկու տուն-թանգարանում պահպանվել է այդ գրքի ռուսերեն թարգմանության 1885 թ. առաջին հատորի մի օրինակը՝ ռուսերեն և հայերեն մակագրություններով՝ Ավետովին։

Լինելով բոլոր ժողովուրդների բարեկամության և լուսավորության ջատագով, Զերնիշևսկին քննադատաբար է մոտենում Վեբերի գրքին, առարկում է նրան իտալական, ֆրանսիական և անգլիական ազգերի նկատմամբ գերմանական ազգի գերազանցության հարցում։ Նա գտնում էր, որ որևէ պատմական փաստի ամեն ի՛նչ բացատրություն ռասսայի մտավոր կամ բարոյական առանձնահատկություններով՝ գիտության կողմից մերժված վայրենի ֆանտազիա է։ Նա խորապես ռոսումնասիրել էր շատ ժողովուրդների, այդ թվում նաև հայ ժողովրդի անցյալն ու ներկան։ Զերնիշևսկու Աստրախանի շրջանի ծանոթներից Պ. Լ. Յոսդինը գրել է, որ նա իր հայ ծանոթների միջոցով նյութեր էր հավաքում հայ ժողովրդի պատմության և մշակույթի մասին. միաժամանակ ձգտում էր ազդել նրանց վրա իր դեմոկրատական ու հումանիստական հայացքներով։

Աստրախանի աշխատավորության, այդ թվում նաև հայերի հետ Զերնիշևսկու կապերը հերքում են այն կարծիքը, որ իբր նա Աստրախանում «ապրում էր միայն իր գրքերով», «կաթինետից գրեթե դուրս չէր գալիս»։ 1886 թ. Օլգա Սոկրատովնային գրած նամակում Զերնիշևսկին հայտնում էր. «Եկավ իմ բարեկամ Ավետովը և պահանջեց, որ գնանք միասին կառքով զբոսնենք... ես հագա վերարկուս և գնացի։ Կես ժամից նա տարավ այն մեծ հրապարակով, որը ընկնում է Արկադիի և այգու միջև»³¹։ Զերնիշևսկին իր նամակներում խոսում է Ավետովի մասին, որպես մտերիմ մարդու, որն իսկապես սիրում էր իրեն և հարգում Օլգա Սոկրատովնային³²։ Աստրախանի ոստիկանական վարչությունը 1885 թ. մայիսի 9-ի ղեկուցագրում հայտնում էր, որ Զերնիշևսկու շրջապատի մարդիկ են՝ Բ. Ե. Սուքիասովը, Ս. Ավետովը, Ռախմանովը, Մարտիրոսովը, Աբգարովը, Մելքումովները և բժիշկ Ս. Մ. Պոպովը։ 1886 թ. դեկտեմբերի 7-ին իր որդի Սաշային գրած նամակում Զերնիշևսկին հայտնում էր. «Ձեռագործ Մելքումովան ամուսնացել է։ Նրա ազգանունը հիմա Կոնստանտինյան է։ Ամուսինը ոչ թե լեհ է, ինչպես կարելի է ենթադրել ազգանունից, այլ մաքուր հայ։ Զբաղմունքով ջութակահար է։ Նա գավառական

³⁰ «Молодая гвардия», 1958, № 7. Константин Ерымовский, Чернышевский в Астрахани, Астрахань, 1964, стр. 37.

³¹ Н. Г. Чернышевский, Полное собрание сочинений, т. XV, М., 1950, стр. 577.

³² Նույն տեղում, հ. XV, էջ 712.

թատերախմբերի հետ մերթ երկար շրջագայել է ամեն տեսակ նահանգական և մեծ գավառական քաղաքներում, մերթ ապրել Մոսկվայում: Ասում են, որ նա լավ արտիստ է»³³:

Ականավոր ջութակահար Կոնժինսկին համերգներով հանդես էր գալիս Մոսկվայում, Կաղանում, Աստրախանում, Բաքվում, Թիֆլիսում, Երևանում և այլ քաղաքներում: 1887 թ. հունիսի 17-ի նամակում Չերնիշևսկին կնոջը գրում էր. «Երեկ հանդիպեցի Կոնժինսկուն: Մենք իրար գերազանցեցինք սիրալիրությամբ: Նա ինձ վրա թողեց բարի մարդու տպավորություն... Նրա հրավերին պատասխանեցի, որ մոտ օրերս կանցնեմ նրա մոտ: Հաջորդ շաբաթ Արկադի թատրոնում նա համերգ է տալու»³⁴: Լսելով Կոնժինսկու համերգը, Չերնիշևսկին Օլգա Սոկրատովնային գրում է. «Հասարակությունը միանգամայն գոհ էր համերգից»: Մի այլ նամակում Չերնիշևսկին հայտնում էր, որ Կոնժինսկիները տեղափոխվել են Մոսկվա:

Նինա Միխայլովնան գրել է, որ երբ Աստրախան է գալիս նշանավոր ողբերգակ Պետրոս Աղամյանը, Չերնիշևսկին կնոջ հետ գնում է նրա հյուրախաղերին: Երբ ընդմիջման ժամանակ Աղամյանն իմանում է, որ Չերնիշևսկին թատրոնում է, մոտենում է նրան արտահայտելու իր խորը հարգանքի և նվիրվածության զգացմունքները: «Աղամյանը ողջունում է Չերնիշևսկուն, որպես ճնշված ազգությունների ազատագրության մեծ մարտիկի և հայ ժողովրդի բարեկամի: Արտիստի ճառն ուղեկցվում է ընկերների ծափահարությոններով»,— գրում է Նինա Չերնիշևսկայան³⁵: Աստրախանում Չերնիշևսկու և Աղամյանի հանդիպման մասին է վկայում նաև Չերնիշևսկիների մտերիմ Սուսաննա Բոգդանովնա Սուբիասովա-Արտեմևան, որն իր հիշողություններում գրել է. «Հայ ողբերգակ Աղամյանի հյուրախաղերի ժամանակ Նիկոլայ Գավրիլովիչը եղել է թատրոնում: Ընդմիջման ժամանակ մեր օթյակը եկան ազատ դերասանները և Նիկոլայ Գավրիլովիչին տարան կուլիսների հետևը: Նրան օվացիա սարքեցին»: Պահպանվել է Չերնիշևսկու «Նյութեր Ն. Ա. Դոբրոլյուբովի կենսագրության» աշխատությունը՝ «Սուսաննա Բոգդանովնա Արտեմևային, խորը հարգանքով Ն. Չերնիշևսկուց» մականգրությամբ:

Չերնիշևսկին և նրա կինը հատուկ սիրով և հոգատարությամբ էին վերաբերվում հայ երեխաներին: Աստրախանում նրանք որպես իրենց ընտանիքի անդամի տասը տարեկան հասակից խնամում են Սուսաննա Խաչատուրովային: Սուսաննա Բոգդանովնան իր հիշողություններում գրել է, որ Չերնիշևսկին շատ էր ազդվում տեսնելով իր շրջապատի աղքատությունը. «մի անգամ նա աշխույժ, ուրախ եկավ իմ փոքրիկ սենյակը և անմիջապես մոայլվելով նկատեց. ...Ինչպե՞ս կարելի է ապրել այս մութ սենյակում», ապա պատմեց իր մտադրության մասին՝ մեր բնակարանում ապրող աղքատ ընտանիքի հայ աղջիկներից մեկին վերցնելու իր մոտ դաստիարակության: Աղջիկը հետաքրքրել էր նրան իր շնորհալիությամբ:

Օլգա Սոկրատովնան պատմել է, որ Չերնիշևսկու ազդեցությամբ Ավետույր պատռել է մի մեծ գումարի մուրհակ:

³³ Նույն տեղում, էջ 615:

³⁴ Նույն տեղում, էջ 634:

³⁵ Н. М. Чернышевская, Повесть о Чернышевском, Саратов, 1973, стр. 214.

1884 թ. Չերնիշևսկին ապրում է Ջանումովների հայկական բազմադամ ընտանիքում: Տանտիրոշ՝ Ստեփան Ջանումովի մահվանից հետո Չերնիշևսկին զբաղվում է նրա տասներկու երեխաների դաստիարակությամբ: Ի. Ս. Ջանումովը իր հուշատետրում գրել է. «Գիմնազիայում սովորող քույրս՝ Վերոնիկան, երկար ժամանակ չէր կարողանում գրել շարադրություն՝ «Գոգուլի նշանակությունը ուս գրականության մեջ» թեմայով: Վերջապես, հուսահատված, նա որոշեց դիմել Չերնիշևսկուն, խնդրելով օգնություն ցույց տալ իրեն: Նիկոլայ Գավրիլովիչը հրաժարվում էր գրել, բայց և այնպես զիջեց: Վերան արտագրեց Չերնիշևսկու գրած շարադրությունը: Ուսուցիչ Տուբերգովը, աշակերտուհիներին վերադարձնելով տետրերը, դրանցից մեկը թողեց իր մոտ. բաց անելով այն հայտնեց, որ Ջանումովայի տետրն է, այնտեղ նա սկսեց շարադրությունը կարդալ բարձրաձայն և գովաբանել այն: Վերոնիկան փայլում էր գոհունակությամբ: Տետրում ուսուցիչը գրել էր. բովանդակության և շարադրության համար հեղինակին՝ 12 անթիվ պլյուսներով, արտագրողին՝ 1: Վերոնիկան վշտացած արցունքներն աչքերին վազեց Նիկոլայ Գավրիլովիչի մոտ: Չերնիշևսկին ներողություն խնդրեց իր անընթեռնելի ձեռագրի համար»³⁶:

Աստրախանի հայերը Չերնիշևսկու մասին տեղեկություններ են ուղարկում այլ վայրերում ապրող իրենց ծանոթներին: Ղազարոս Աղայանի աշակերտներից մեկը Աստրախանից իր ուսուցչին գրում էր. «Ձեզ արդեն հայտնի է, որ ուսաց երեկի գրողներից մեկը՝ Չ-սկին այստեղ է: Այդ անգութները դորան այստեղ էլ հանգիստ չեն տալիս. նշանակված է մի առանձին անձնավորություն, որը միշտ հետևում է դորան՝ թե ուր է գնում, ինչ է ասում, ում հետ է խոսում, մի խոսքով, նորա ամեն մի քայլը դիտում են: Այդ իրեն հայտնի է: Առողջական տեսակետից բավականին լավ է. ձայնը թույլ է»³⁷: Իր բարեկամների միջոցով Չերնիշևսկին իմանում է, որ նկարիչ, ճարտարապետ և հնագետ Ֆ. Գ. Բեռնշտամը շրջագայել է Հայաստանում, այցելել Գեղարդի վանքը, էջմիածին և դրա համար արժանացել է մամուլի խրախուսանքին: Կարդալով այս մասին, Չերնիշևսկին 1887 թ. սեպտեմբերի 26-ի նամակում Ա. Ն. Պիպինին գրում է. «Մի քանի օր առաջ «Ռուսսկիե վեդեմոստի»-ում կարդացի շատ գովասանական գնահատական Ֆեոդոր Գուստավովիչի հնագիտական աշխատանքների մասին: Այդ ինձ շատ ուրախացրեց»³⁸:

Ն. Գ. Չերնիշևսկու մահը խորը վիշտ պատճառեց հայ առաջավոր մարդկանց: Չնայած ցարական իշխանությունների ձեռնարկած բոլոր միջոցառումներին՝ արգելելու նրա մահվան մասին ամեն մի արձագանք, մեծ հեղափոխականի մահվան բոթը տարածվեց ողջ Ռուսաստանով մեկ: Հասավ նաև արտասահման: Չերնիշևսկիներին մոտիկ բարեկամ Սոֆյա Մեկքումովնան Աստրախանից Օլգա Սոկրատովնային գրած ցավակցական նամակում Նիկոլայ Գավրիլովիչի մահը համարում էր «մեծ և անսպասելի կորուստ»³⁹:

«Մշակ»-ը 1889 թ. հոկտեմբերի 21-ի համարում հայտնում էր. «Երեկելի

³⁶ Գ Ե Վ Ե Ն Ն Ո Վ Ն Կ Ն, Ռուս-հայ գրական կապերը XIX—XX դարերում, գ. 1, Երևան, 1960, էջ 222—223:

³⁷ Նույն տեղում, էջ 224:

³⁸ Н. Г. Чернышевский, Полное собрание сочинений, т. XV, стр. 650.

³⁹ С. Г. Арешян, Армянская печать и царская цензура, Ереван, 1957, стр. 501.

«Ուստ գրողը նիկողայ Չերնիշևսկին վախճանվեց»,- Հայ մամուլի համար գրված շատ նյութեր պահպանվել են ցարական գրաքննության արխիվներում: Կովկասյան հայկական թերթերի Աստրախանի թղթակիցը Չերնիշևսկու մահվան առթիվ գրել է. «Վերջին տարիներս, երբ նա ապրում էր Աստրախանում, այնտեղ եկող ամեն մի երիտասարդ իր պարտքն էր համարում այցելել Չերնիշևսկուն, Շատերը, որոնք չգիտեին ինչ անել, գնում էին նրա մոտ, հույս ունենալով պատասխան ստանալու այդ անիծյալ «Ի՞նչ անել» հարցի մասին: Եվ Չերնիշևսկին պատասխանում էր միևնույնը. «Սովորեցեք, միշտ սովորեցեք, միայն գիտությունը կարող է ձեզ ճանապարհ ցույց տալ. միայն նա կարող է ձեզ այդ հարցին պատասխան տալ»⁴⁰.

Ինչպես ուսումնական իրականություն մեջ, այնպես էլ հայ հասարակական-քաղաքական կյանքում Չերնիշևսկու իսկական գնահատողներն ու ժառանգները հանդիսացան հեղափոխական մարքսիստները, բոլշևիկները: Գերցենի, Դոբրոլյուբովի, Չերնիշևսկու և նրա զինակից նախնականի ուսմունքը հուսալի կամուրջ դարձավ հայ հեղափոխականների անցման համար դեպի մարքսիզմը: Հիշենք Շահումյանի խոսքերը՝ ասված Սպանդարյանի մասին, որ Սուրենի հոգևոր հայրերն ու ուսուցիչները եղել են Չերնիշևսկին, Բեխինսկին, Պլեխանովը, և ապա Մարքսը և էնգելսը: Դազարոս Աղայանի գործունեության 40-ամյակի առթիվ իր ճառում, որի մեջ ազդարարվում էր հայ հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի ասպարեզ գալը և նրա պայքարի ծրագիրը, Շահումյանը Բեխինսկուն, Պիսարևին ու Չերնիշևսկուն անվանում է 40-ական ու 60-ական թվականների հսկաներ, որոնք արհամարհելով ցարական դժան հետապնդումները, հմտորեն օգտագործում էին լեգալ և ազատ մամուլը՝ իրենց հեղափոխական-դեմոկրատական գաղափարները ժողովրդին հասցնելու համար: «Լեգալ «Современник»-ը,— գրել է Շահումյանը,— նրանց ձեռքին, մանավանդ Դոբրոլյուբովի և Չերնիշևսկու օրով ավելի համարձակ ու ավելի արմատական է եղել, քան Գերցենի Լոնդոնում հրատարակվող հեղափոխական «Колокол»-ը⁴¹: Բեխինսկու և Չերնիշևսկու թողած գրական ավանդները Շահումյանն անվանում էր սրբազան, գրական բարձրի մաքրության տիպար, որոնց օրինակով պետք է հարվածել նացիոնալիստներին.

1862 թ. հոկտեմբերի 5-ին Օլգա Սոկրատովնային ուղարկած նամակում Ջերնիշևսկին գրել է. «Մեր երկուսի կյանքը պատկանում է պատմությանը. կանցնեն հարյուրավոր տարիներ և մեր անունները մարդկանց համար դարձյալ կմնան սիրելի և մեզ կհիշեն երախտագիտությամբ»⁴²:

Մարգարեական խոսքեր: 150 տարի է անցել Զեմինյանսկու ծննդյան օրվանից, բայց նրա կյանքի, գործի ու գաղափարների նկատմամբ հետաքրքրությունը գնալով ավելի ու ավելի է մեծանում, նրա անունը մնում է ու հավերժ կմնա սիրելի նաև հայ ժողովրդի համար, որը միշտ երախտագիտությամբ է հիշում ուսա մեծ ժողովրդի հանճարեղ զավակին:

40 Գ Ն Ա Ր Գ Ե Ն Հ Ո Վ Ն Ա Ն, ՌՈՒՄ-ՀԱՂ զրահան կապերը XIX—XX դդ., Երևան, 1960, էջ 230.

41 Ստ. Շահնազյան, *Եժ*, հ. 1, Երևան, 1975, էջ 30:

⁴² Н. Г. Чернышевский, Полное собрание сочинений, т. XIV, стр. 456.